ՎՐԹԱՆԵՍ ՓԱՓԱԶՅԱՆԸ ԱՐՏԱՇԵՍ ԿԱՐԻՆՅԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Հայտնի է, որ ակադեմիկոս Արտաշես Բալասիի Կարինյանը (1886—1982) կուսակցական-պետական գործունեությանը զուգընթաց ակտիվորեն զբաղվել է գրական-մշակութային հարցերով։ Մեծ է նրա վաստակը մասնավորապես անցյալի գեղարվեստական ժառանգության գնահատման գործում։ Այդ ասպարեզում նա մշակույթի հայ (նաև ռուս) գործիչներին նվիրել է բազմաթիվ շահեկան ուսումնասիրություններ, որոնք տպագրվել են առանձին մենագրությունների ու հոդվածների ձևով։ Տակավին 1906 թ. լույս տեսավ երիտասարդ Ա. Կարինյանի «Գրականություն ու կյանք» գրքույկը։ Հետագա տարիներին, ուսումնասիրելով ե իրեն հատուկ ոճով վերլուծելով Չերնիշևսկու, Ջեխովի, Նալբանդյանի, Թումանյանի, Ջարենցի և համբավավոր մի շարք այլ դեմքերի ապրած ժամանակաշրջանն ու միշավայրի սոցիալ-քաղաքական շարժառիթները, նրանց գրական-ստեղծագործական մոտիվների ուրույն կողմերը, Ա. Կարինյանը ընթերցողների սեղանին դրեց արժեքավոր երկեր, որոնք մինչև օրս չեն կորցրել իրենց արժեքը։

Ստորև ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում Ա. Կարինյանի «Վրթանես Փափազյան» հոդվածը, որը նա ցանկացել էր տպագրել նշանավոր գրողի 100 ամյակի առթիվ։ Մեր կարծիքով, այն որոշակի արժեք ունի Վ. Փափազյանի ստեղծագործական ուղու գնահատման տեսակետից։

Ձեռագիրը պահվում է Հայկական ՍՍՀ Հայ պարբերական մամուլի պետական կենտրոնական արխիվում (տե՛ս ֆոնդ № 100, ց. 2, գ. 505, թերթ 21—27)։

ՌՈՒԲԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՎՐԹԱՆԵՍ ՓԱՓԱԶՅԱՆ

(1866—1966)

Վրթանես Փափազյանը հայ դեմոկրատական գրականության տաղանդավոր ներկայացուցիչներից էր։ Դաժան անցյալի մթին տարիներին նա մեծ աշխատանք է տարել որպես տոկուն հրապարակախոս, խմբագիր-ժուռնալիստ և արձակագիր-գեղագետ, ազգագրագետ ու թարգմանիչ, հայ գրականության ու մշակույթի հարուստ արժեքներն ուսումնասիրող պատմաբան։ Դժվարին ու ծանր օրերին նա, ինչպես և շատ ուրիշ հայ դեմոկրատ գրագետները, շատ է տառապել, թափառել է քաղաքից քաղաք, կատարել է հաշվապահի և հաճախ անապահով հայ ուսուցչի պարտականությունները։ Մտիպված է եղել համակերպվել անպատկառ դրամատերերի և տգետ աղա-հոգաբարձուների անիմաստ առաշադրություններին։

Նա ծնվել է Վասպուրականի Վան քաղաքում, ուր և ստացել է իր նախնական կրթությունը։ Բարձրագույն դպրոցն ավարտել է Շվեյցարիայում։ Հրնօրյա ժնևի, Լոզանի, Լյուցերնի մասին գրող գործիչները ժամանակին նկարագծել են այդ քաղաքներում ուսանող ռուս, հրեա, հայ ու կովկասցի շատ ուրիշ էմիգրանտների կյանքն ու միջավայրը։ Այդ ամենը պետք է ուժգին ազդեցություն թողներ նաև Վ. Փափազյանի վրա։

Վաղեմի ուսանողական այդ տարիներին էլ ստեղծվել են այն ապրումները ու մտորումները, որոնք հետագայում այնքան ուրույն ուղղություն են հաղորդել երիտասարդ հայ գրագետի աշխատանքներին ու գործունեությանը։

Ուսանողության տարիներին Վ. Փափազյանը ուսումնասիրել է բարձր հումանիստական մշակույթի մեծ վարպետների երկերը, ժողովուրդների բանահյուսության հայտնի վավերագրերը, մասնավորապես Դոդեի, Ջոլայի, Շեքսպիրի, Դիկկենսի, Պրոսպեր Մերիմեի նման գեղագետների ստեղծագործությունները։ Ըստ երևույթին վաղեմի երիտասարդության տարիներին է նա

«Խութ-Սաբա» և «Սանթոս» յուրահատուկ նովելների մեջ նկարագծված հայ գրնչուհիների կերպարները կապակցել ազատագրական շարժումների ռոմանտիկական հնօրյա գաղափարախոսության հետ։

Լավ է հայտնի, որ, վերադառնալով հայրենի վայրերը, Վ. Փափազյանը աշխատակցել է «Արձագանք», «Մշակ», «Մուրճ» և ուրիշ պարբերագիրներին։ Նույն այդ օրերին է նա հրապարակել նաև Րաֆֆիի մեծ ազդեցության ներքո կերտված իր գրական և հրապարակախոսական ակնարկներն ու պատմվածքները։ Րաֆֆիի հետ նա շատ մոտիկ ծանոթ էր տակավին վաղ երիտասարդության օրերից։

Բազմաթիվ պտույտներ է կատարել Վ. Փափազյանը հայ բնաշխարհի վայրերում, եղել է հեռու լեռնային տեղերում, ծանոթություն և կապեր է հաստատել մշեցի, շատախցի[1], ... գեղջուկ հայրենակիցների և նույնիսկ հայ բոշա-դնչուների, տաճիկ և, մանավանդ, քուրդ աշխատավորների հետ։ Րաֆֆիի մտայնության և հայեցության հատուկ շատ ուրույն հատկանիշների ազդեցության կընիքը նշմարվում է Վ. Փափազյանի առաջին պատմվածքների, շատ որոշակի կերպով՝ «Ընիչերի», «Ռաշիդ» և այլոց մեջ։ Ես նկատի ունեմ հատկապես նրա հայտնի պատկերներն ու հյուսվածքը, թեմատիկան, հերոսներին, շրշապատի ընդհանուր կոլորիտը։ Իմ կարծիքով Վ. Փափազյանը, ելնելով Րաֆֆիի դեմոկրատական դիտակետից, ջանացել է բռնակալական Թուրքիայի սուլթանատի դեմ ուղղված իր պատմվածքների մեջ ուժգին ուշադրություն նվիրել սոցիալական մոտիվներին[2]—ուժեղների և թուլերի, բռնակալների ու ճնշված աշխատավորների սուր բախումների ռեալիստական նկարագրությանը։ Հայրենի իրականությունը վիպագրի երկերում չի գծագրվել որպես «միասնական» ու միապաղաղ երանավետ անդաստան։ Նույնիսկ հայ հոգևորականության ինքնատիպ «կերպարներին» նվիրված իր երկերի էշերում գյուղագիր հրապարակախոսը նշմարելի կերպով արձագանքել է մեծատաղանդ ուսուցչի ռեալիստական ուղենիշներին։

Հայ բոշաների-գնչուների ուսումնասիրությանը նա նվիրել է, ինչպես հայտնի է, հատուկ ուշադրություն թե՛ ռուսերեն գրված իր զեկույց-հետազոտության (զետեղված «Ազգագրական ընկերության[3] ... հատորներից մեկում) և թե՛ Ե. Լալայանի «Ազգագրական հանդես»-ի էջերում հրապարակված աշխատության մեջ։ Ուշագրավ այդ երկերի սկզբնագրին նա կցել է բառարան, հավելվածներ, նույնիսկ բոշաներէ երգերից քաղված որոշ հատվածներ... Նման աշխատանք և պրպտումներ է ձեռնարկել նա նաև քուրդ աշխատավորների կյանքի ուսումնասիրության օրերին։ Քրդական երգերը Վ. Փափազյանը շատ բարձր էր գնահատում։ Երբ նվագում էր այդ երգերը, դիտավորությամբ[4] ... լարերին հատուկ թավ հնչյուն էր հաղորդում՝ ընդգծելու քուրդ մոտիվների տխուր մեղեդիները։ Վ. Փափազյանի «Լուր-դա-լուր» պոեմն ունի ուժգին սոցիալական շեշտ։

Դուցե անտեղի չէր լինի նշել, որ ժամանակին մեծատաղանդ հայագետ Միաբանն[5] է կրոնական «Արարատ» ժուռնալի էջերում նշել հին օրերի հայ կրոնական-հերետիկոսական հոսանքների ուրույն «կապերը» քուրդ ժողովրդի շատ ուրույն մտավոր տենդենցների հետ։

Վիպագիր Վ. Փափազյանը մեծագույն ուշադրությամբ հետևում էր «արեվելյան» ժողովուրդների արվեստին արձագանքող երաժշտագետների ստեղծագործական որոնումներին։ Նա սիրում էր նվագել Բրամսի «Հունգարական

---

1 Հաջորդ մեկ բառն անընթեռնելի է (այս և մյուս ծանոթագրությունները մերն են. Ա. Կարինյանինը տրվում է աստղանիշով)։

2 Այս և հետագա ընդգծումները հեղինակինն են։

3 Հաջորդ մեկ-երկու բառը հոդվածագիրը բաց է թողել։

4 Հաջորդ բառն անընթեռնելի է։

5 Խոսքը Գալուստ Տեր-Մկրտչյանի մասին է։

պարերը», ինչպես որոշ ստեղծագործություններ և համառ կերպով ստանում էր «արևելյան» արձագանքները, միշտ ընդգծելով առանձնապես Գլինկայի, Բալակիրևի, Բորոդինի հանճարեղ գործերի մեջ ուրույն և շերմ մոտեցումը արևելյան բարդ երաժշտության թեմաներին։

Այդ ամենի մասին առանձնապես այսօր վիպագրի ընթերցողները պիտի վերհիշեն թեկուզ հենց նրա համար, որ նման երանգներն էլ նպաստում են խոհուն գրողի մտահայեցությունում տակավին քաշ հայտնի հատկանիշների նշգրիտ լուսաբանությանը։ Դարձյալ տեղին է նշել, որ, այդպես մոտենալով արևելյան ժողովուրդների հումանիստական մշակույթին, Վ. Փափազյանը ցանկանում էր հիշեցնել արևելյան դեսպոտիանների բռնակալների դեմ պայքարող աշխատավորների կարևոր դերի ու նշանակության մասին։ Ահա ինչու նա աշխատել է իր նշանակալից երկերի մեջ, հատկապես «Ալեմդիր», «Ազերֆեզա» վեպերի և ապա «Մերկ դերվիշը» ու «Նիրվանա» ակնարկների մեջ, հենց ելնելով իր անվանի ուսուցչի մեկնակետից, ցուցահանել հասարակական-գաղափարական սուր բախումների նշանակությունը։

Այսօրվա ավելի ուշադիր ընթերցողները կարող են, իհարկե, վերապահությամբ շեշտել վիպագրի նաև միամիտ մոտեցումը, նրա «արևելյան» երկերի թերությունները։ Այնուամենայնիվ, մեր կարծիքով, անգամ սկեպտիկ քննադատները չեն կարող քողարկել ակներև այն փաստը, որ նման երկեր կերտող հայ վիպագիրը իրականում հանդես է եկել որոշակիորեն որպես տրադիցիոն արևմտյան «տուրիստների» ու միսսիոներների մակերեսային հայացքների ռեակցիոն և ռասիստական բնույթը դատապարտող ու ցուցադրող գործիչ։ Տաղանդավոր հայ դեմոկրատ վիպագրի նման հիրավի նոր դիրքորոշումը կապված էր արևելյան ժողովուրդների դեմոկրատ գրողների այն մտահայեցության հետ, որի արձագանքները այնքան ուշագրավ կերպով հնչում են ադրբեջանական հայտնի երգիծաբանական «Մոլլա Նասրեդդին» ժուռնալի էջերում*։

Երբ այդ ամենից հետո մենք նորից անցնում ենք Վ. Փափազյանի կիսամեմուարային ու հրապարակախոսական այն նոթերին, որոնք լույս են տեսել Ա. Արասխանյանցի «Մուրճ»-ի էջերում, մեզ համար ավելի պարզորոշ է դառնում վիպագրի թե՛ հայտնի «Տուրիստի հիշատակարան»-ի հիմնական երանգների բնույթը և թե՛ հենց այդ ուղեգծից գործարանային-նավթային իրականության նոր պրոբլեմատիկայի ուսումնասիրությանն անցնող հումանիստ-վիպագրի դեմքը։ Բաքվի «Կոմունիստ»-ի էջերում գրականագետ Անտոնյանը չէր սխալվում, երբ հիշեցնում էր Վ. Փափազյանի կողմից նախագծված նոր «գործարանային» վեպի՝ ուսմավարտ աշխատության մասին։

Որքան էլ անկատար, թույլ կամ միամիտ չեն գյուղական հայրենիքի մասին երազող բալախանցի հայ բանվորի՝ «սյուրբյանչիի» կամ ուրիշ գործավորների «պորտրետները», դրանք ուշագրավ են հենց այն կողմից, որ բնութագրում են նիհ ուղիներից դեպի նոր հանգրվանները նետվող՝ տակավին վաղեմի ազգայնական-ռոմանտիկական անուրջների ու պատրանքների ազդեցությունից վերջնականապես չազատագրված, բայց որոշակիորեն նոր ուղիներ որոնող ռեալիստ-վիպագրի դիմաստվերը։ Ահա ինչու, երբ Վ. Փափազյանը իսպանական Զոլայի, վիպագիր Բլասկո Իբանիյենի ակնարկի ազդեցության ներքո կերտում է վայրագ «վիշապի» դեմ կռվի ելնող ռևոլյուցիոն բանվորի նոր կերպարը, նույնիսկ հայ վիպագրի երեկվա ազգայնական բարեկամների համար ավելի ակնորոշ է դառնում նրա այնքան յուրահատուկ «խենթերի»[6] խոսքերի ու որոնումների իրական բնույթը և ուղղությունը... Իսկ երբ այդ ա-

---

* Նշանակալից այդ փաստը նշել են ադրբեջանական սովետական գրականագետները (հատկապես Ազիզ Միրահմեդովը)։ Անգլիացի արևելագետ Բրաունի՝ իրանական մամուլի և պոեզիայի պատմությանը նվիրված ստվար հետազոտության մեջ զետեղված են նաև ուշագրավ նկարներ։

6 Ա. Կարինյանն ակնարկում է Վ. Փափազյանի «Խենթը (Մի խելոքի հիշատակարանից)» պատմվածքի հերոսին։

մնը քննարկելուց հետո միևնույն վաղեմի «բարեկամները»՝ համակված զայրույթով, կարդում և քննարկում էին Լևոն Սարգսյանի[7] «Մուրճ» ամսագրի էջերում զետեղված նոր կովկասահայ գյուղական իրականության մռայլ առօրյայի նկարագրությանը նվիրված անողոք և ռեալիստական նկարները, հուսահատորեն ստիպված էին լինում արձանագրել «չորրորդ դասի» ուսուցիչոն գաղափարախոսների ակներև հաղթանակը։ Այդպես էին վարվում սակայն միմիայն «նոր ուղիներ» որոնող ավելի բարեխիղճ այն «բարեկամները», որոնք իրենք էլ ձայնակցում էին հայ գյուղի պիշակավոր զոռբաների և «ազգասեր» կուլակների դեմ ծառացող առանձին «խեղճերին» քննադատական ելույթներին։ Այդպես էին խորհում նաև Վ. Փափազյանի գյուղական պատկերների կամ «ժայռը» պիեսի այն ընթերցողները, որոնք անձկանքով իրենք էլ որոնում էին հարազատ ժողովրդի ազատագրման նոր ուղիներ։ Սակայն այդպես չէին կարող մոտենալ և չէին ցանկանում մոտենալ դեպի «կղերաստան» ուղևորվող ազգայնական քրմապետների դեն Կարապետի այն զինվորներն ու հետևողները, որոնք վայրագ ատելությամբ էին հետևում ռուս ժողովրդի մեծ ուսուցիչոն վիպագրի՝ Մաքսիմ Գորկու բարձր գաղափարական ուղեգիծը պաշտպանող և ժողովուրդների բարեկամության վսեմ ավանդները պաշտպանող ու ժողովրդականացնող «խեղճ» հայ վիպագիր Վրթանես Փափազյանի խիզախ գրական-հասարակական գործունեությանը։ Այսօր, սակայն, տաղանդավոր վիպագրի կյանքի և գործունեության տխուր այդ էջերը հատկապես կարող են գրավել ու պիտի գրավեն մեր համոզմամբ նրա ընթերցողների առանձնահատուկ ուշադրությունը....

ԱՐՏԱՇԵՍ ԿԱՐԻՆՅԱՆ

---

7 Լևոն Դավթի Սարգսյան (1863—1927)—հրապարակախոս, լրագրող, հասարակական-քաղաքական գործիչ։ Մեծամասամբ աշխատակցել է «Մուրճ» ամսագրին, իսկ 1903—1907 թթ. եղել է այդ ամսագրի խմբագիր-հրատարակիչը։ Վ. Փափազյանի շատ գործեր տպագրվել են «Մուրճ» ամսագրում։